

PHILIPS

AC1715



Օգտագործողի ձեռնարկ

Բովանդակություն

1	Ուշադրություն	2
	Անվտանգություն	2
	Էլեկտրամագնիսական դաշտեր (ԷՄԴ)	4
	Օգտահանում	4
	ԵՄ համապատասխանության պարզեցված հայտարարագիր	4
2	Ձեր օդամարիչը	5
	Ապրանքի ընդհանուր բնութագիրը	5
	Կառավարման ֆունկցիաների բնութագիրը	6
3	Ինչպես սկսել	7
	Ֆիլտրի տեղադրում	7
	Wi-Fi-ի ցուցիչի նկարագիր	7
	Հոսանքից սնուցման միացում	8
	Wi-Fi կապ	8
4	Օդամարիչ սարքի օգտագործում	9
	Օդի որակի ցուցիչների նշանակությունը	9
	Միացում և անջատում	10
	Ավտոմատ ռեժիմի կարգավորումների փոփոխություն	11
	Էկրանի ցուցիչի միացում	11
	Ցուցիչի միացման/անջատման գործառնայթ օգտագործում	12
5	Մաքրում և տեխնիկական սպասարկում	13
	Մաքրման ժամանակացույց	13
	Օդամարիչի կորպուսի մաքրում	13
	Օդային մասնիկների սենսորի մաքրում	14
	Ֆիլտրի մակերևույթի մաքրում	14
	Ֆիլտրի փոխարինում	15
	Ֆիլտրի վերակայում	17
6	Պահեստավորում	17
7	Անսարքությունների վերացում	18
8	Երաշխիք և աջակցություն	20
	Պատվիրեք մասեր կամ աքսեսուարներ	20

1 Ուշադրություն

Անվտանգություն

Սարքն օգտագործելուց առաջ ուշադիր կարդացեք այս օգտագործողի ձեռնարկը և պահեք այն՝ հետագայում օգտվելու համար:

Սարքի լավ աշխատանքի համար համոզվեք, որ օդամաքրիչը թարմացվել է ամենավերջին տարբերակով: Դուք կարող եք կատարել թարմացումը Air+ հավելվածի միջոցով:

Վտանգ

- Էլեկտրահարումից և/կամ հրդեհից խուսափելու համար մի մաքրեք սարքը ջրով, որևէ այլ հեղուկով կամ (դյուրավառ) լվացող միջոցներով և հետևեք, որպեսզի այդ հեղուկները չընկնեն սարքի մեջ:
- Սարքի մոտ մի ցողեք դյուրավառ նյութեր, օրինակ՝ միջատասպան նյութեր կամ բուրմունքներ:

Զգուշացում

- Նախքան սարքը միացնելը, համոզվեք, որ սարքի վրա նշված լարումը համապատասխանում է տեղական հոսանքի լարմանը:
- Եթե հոսանքի լարը վնասված է, այն պետք է փոխարինվի Philips-ի, Philips-ի կողմից լիազորված սպասարկման կենտրոնի կամ նման որակավորում ունեցող անձանց կողմից՝ վտանգից խուսափելու համար:
- Մի օգտագործեք սարքը, եթե խրոցը, հոսանքի լարը կամ հենց սարքը վնասված են:
- Այս սարքը կարող են օգտագործել 8 տարեկան և բարձր տարիքի երեխաները, սահմանափակ ֆիզիկական, զգայական կամ մտավոր ունակություններ կամ փորձի և գիտելիքների պակաս ունեցող անձինք, եթե նրանց տրամադրվել են սարքի անվտանգ օգտագործման հրահանգները, կամ ապահովվել է վերահսկողություն՝ անվտանգ օգտագործումը երաշխավորելու համար և, եթե նրանք տեղեկացված են դրա հետ կապված վտանգների մասին:
- Երեխաներին արգելվում է խաղալ սարքի հետ:
- Երեխաները չպետք է առանց վերահսկողության մաքրման և տեխսպասարկման աշխատանքներ իրականացնեն:

- Մի ծածկեք օդի մուտքի ու ելքի անցքերը, օրինակ՝ առարկաներ տեղադրելով այդ անցքերի դիմաց:
- Հետևեք, որպեսզի օտար առարկաներ չընկնեն սարքի մեջ օդի ելքային անցքից:
- Ստանդարտ WiFi ինտերֆեյս՝ 802,11b/g/n 2,4 ԳՀց՝ 100 մՎտ EIRP (արդյունավետ իզոտրոպիկ ճառագայթման հզորություն) առավելագույն ելքային հզորությամբ:
- Bluetooth-ի տարբերակ 5.0 (LE)՝ 2,4 Գհց հաճախականությամբ՝ 10 մՎտ EIRP-ից պակաս RF (ռադիոհաճախականության) ելքով:

Զգուշացում

- Այս սարքը չի կարող փոխարինել լիարժեք օդափոխության համակարգին, փոշեկուլով կանոնավոր մաքրմանը կամ խոհանոցի օդաքաշման համակարգին:
- Միշտ տեղադրեք և օգտագործեք սարքը չոր, կայուն, հարթ և հորիզոնական մակերևույթի վրա:
- Սարքի շուրջը թողեք առնվազն 20 սմ ազատ տարածք, իսկ սարքի վերևում՝ առնվազն 30 սմ ազատ տարածք:
- Մի նստեք կամ կանգնեք սարքի վրա: Սարքի վրա առարկաներ մի դրեք:
- Մի տեղադրեք սարքն անմիջապես օդորակիչի տակ, որպեսզի կոնդենստը չթափվի սարքի վրա:
- Օգտագործեք միայն այս սարքի համար նախատեսված Philips-ի օրիգինալ ֆիլտրերը: Մի օգտագործեք այլ ֆիլտրեր:
- Ֆիլտրի այրումը կարող է լուրջ սպառնալիք լինել մարդու կյանքի համար և/կամ վնասել ուրիշներին: Մի օգտագործեք ֆիլտրը որպես վառելիք կամ նմանատիպ նպատակների համար:
- Մի հարվածեք սարքին (հատկապես օդի մուտքի և ելքի հատվածները) կոշտ առարկաներով:
- Մատները կամ այլ առարկաներ մի դրեք օդի ելքի կամ մուտքի անցքի մեջ՝ մարմնական վնասվածքներից խուսափելու կամ սարքը անսարքությունից պաշտպանելու համար:
- Մի օգտագործեք այս սարքը, երբ փակ տարածքում օգտագործել եք ծխատիպ միջատասպան միջոցներ կամ այն վայրերում, որտեղ կան յուղային մնացորդներ,

կատարվել է խնկարկություն կամ առկա են քիմիական գոլորշիներ:

- Մի օգտագործեք սարքը գազի սարքավորումների, ջեռուցման սարքերի կամ բուխարիների մոտ:
- Միշտ անջատեք սարքը հոսանքից, երբ ցանկանում եք այն տեղափոխել, մաքրել, փոխել ֆիլտրը կամ կատարել տեխսպասարկման այլ աշխատանքներ:
- Սարքը նախատեսված է միայն նորմալ շահագործման պայմաններում կենցաղային օգտագործման համար:
- Մի օգտագործեք սարքը խոնավ կամ բարձր ջերմաստիճանային պայմաններում, օրինակ՝ լոգարանում, զուգարանում կամ խոհանոցում կամ ջերմաստիճանի մեծ տատանումներով սենյակում:
- Սարքը չի չեզոքացնում ածխածնի օքսիդը (CO) կամ ռադոնը (Rn): Այն չի կարող օգտագործվել որպես անվտանգության սարք՝ հրդեհի բռնկման և վտանգավոր քիմիական նյութերի արտահոսքի դեպքում:

Էլեկտրամագնիսական դաշտեր (ԷՄԴ)

Այս սարքը համապատասխանում է էլեկտրամագնիսական դաշտերի ազդեցությանը վերաբերող կիրառելի ստանդարտներին և կանոնակարգերին:

Օգտահանում

Այս նշանը ցույց է տալիս, որ այս ապրանքը չպետք է թափվի սովորական կենցաղային աղբի հետ (2012/19/ԵՄ):



Հետևեք էլեկտրական և էլեկտրոնային ապրանքների առանձին հավաքման հետ կապված ձեր երկրում գործող կանոններին: Ճիշտ օգտահանումը օգնում է կանխել շրջակա միջավայրի և մարդու առողջության համար բացասական հետևանքները:


ԵՄ համապատասխանության պարզեցված հայտարարագիր

Սույնով, DAP B.V.-ն հայտարարում է, որ AC1715 ռադիոսարքավորման տեսակը համապատասխանում է 2014/53/ԵՄ հանձնարարագրին: ԵՄ համապատասխանության հայտարարագրի ամբողջական տեքստը հասանելի է հետևյալ վեբկայքում՝ **www.philips.com**:

2 Ձեր օդամաքիչը


Շնորհավորում ենք գնման կապակցությամբ և բարի գալուստ Philips:
Philips-ի կողմից առաջարկվող աջակցությունից լիարժեք օգտվելու համար
գրանցեք ձեր ապրանքն այստեղ՝ www.philips.com/welcome:

Ապրանքի ընդհանուր բնութագիրը



*Օգտագործեք միայն հետը տրամադրված
միացման աղապսերը

Կառավարման ֆունկցիաների բնութագիրը



Կառավարման կոճակներ

	Միացման/անջատման կոճակ		Միացման/անջատման կոճակ
	Ռեժիմի փոխարկման կոճակ		

Ցուցադրման վահանակ


	Wi-Fi-ի ցուցիչ		Ավտոմատ ռեժիմ
	Արագության ռեժիմ 1		Արագության ռեժիմ 2
	Տուրբո ռեժիմ		Քնի ռեժիմ
PM2.5	PM2.5 մակարդակի ցուցիչ	IAI	Սենյակում ալերգենների մակարդակի ցուցիչ
	Ֆիլտրի մաքրման ազդանշան		Ֆիլտրի փոխարինման ազդանշան

3 Ինչպես սկսել

Ֆիլտրի տեղադրում

Առաջին անգամ օգտագործելուց առաջ հեռացրեք ֆիլտրի ամբողջ փաթեթավորումը:

Նշում. Նախքան ֆիլտրը տեղադրելը՝ համոզվեք, որ օդամաքրիչն անջատված է էլեկտրասնուցման վարդակից:



- 1 Քաշեք հետևի կափարիչը և հանեք այն սարքից:
- 2 Հանեք ֆիլտրը սարքից:
- 3 Հեռացրեք օդի մաքրման ֆիլտրի փաթեթավորման բոլոր նյութերը:
- 4 Ֆիլտրը նորից հետ դրեք սարքի մեջ:
- 5 Հետևի կափարիչը նորից դրեք տեղը:

Wi-Fi-ի ցուցիչի նկարագիր


Wi-Fi պատկերակի կարգավիճակը	Wi-Fi կապի կարգավիճակը
Թարթում է նարնջագույնով	Միանում է սմարթֆոնին
Կայուն նարնջագույն	Միանում է սմարթֆոնին
Թարթում է սպիտակ գույնով	Միանում է սպասարկիչին
Կայուն սպիտակ	Միանում է սպասարկիչին
Անջատված	Wi-Fi գործառույթն անջատված է

Հոսանքից սնուցման միացում

Նշում. Էլեկտրահարման վտանգ: Երբ անջատում եք ՓՀ հոսանքի լարը, միշտ հանեք խրոցը վարդակից: Երբեք մի քաշեք լարից:

Հոսանքի աղապսերը միացրեք.

- Նախ, սարքի վրայի սնուցման խրոցին:
- Այնուհետև՝ պատի վարդակին:



Wi-Fi կապ

Առաջին անգամ Wi-Fi կապի կարգավորում

- 1 Ներբեռնեք և տեղադրեք Philips-ի «Air+» հավելվածը **App Store**-ից կամ **Google Play**-ից:
- 2 Օդամաքրիչի խրոցը մտցրեք հոսանքի վարդակի մեջ և սեղմեք **⏻** օդամաքրիչը միացնելու համար:
 - ➔ Wi-Fi-ի ցուցիչը **📶** առաջին անգամ միացնելիս նարնջագույն լուսավորությամբ թարթում է:
- 3 Համոզվեք, որ ձեր սմարթֆոնը կամ պլանշետը հաջողությամբ միացված է ձեր Wi-Fi ցանցին:
- 4 Գործարկեք «Air+» հավելվածը և էկրանի վերևում սեղմեք «**Կապակցել նոր սարք**» կամ «**+**» կոճակը: Օդամաքրիչը ձեր ցանցին միացնելու համար հետևեք էկրանի ցուցումներին:



Նշում.

- Այս հրահանգները նախատեսված են օդամաքրիչի առաջին անգամ կարգավորման համար: Եթե ցանցի կարգավորումները փոխվել են կամ հարկավոր է նորից կատարել կարգավորումները, տես «Wi-Fi կապի վերակարգավորում» 9 էջում բաժինը:
- Եթե ցանկանում եք մեկից ավելի օդամաքրիչ միացնել ձեր սմարթֆոնին կամ պլանշետին, ապա մեկ առ մեկ պետք է միացնեք դրանք:
- Համոզվեք, որ ձեր սմարթֆոնի կամ պլանշետի և օդամաքրիչի միջև հեռավորությունը 10 մ-ից պակաս է և սարքերի միջև չկան ուրիշ առարկաներ, որոնք կխոչընդոտեն ազդանշանների փոխանցմանը:

Wi-Fi կապի վերակարգավորում

Նշում.

- Վերակարգավորեք Wi-Fi կապը կանխադրված ցանցի փոփոխության դեպքում:
- 1 Օդամաքրիչի խրոցը մտցրեք հոսանքի վարդակի մեջ և սեղմեք  օդամաքրիչը միացնելու համար:
- 2 Միաժամանակ սեղմեք  և պահեք 3 վայրկյան, մինչև չլսեք ազդանշանը:
 - ➔ Օդամաքրիչն անցնում է կապակցման ռեժիմին:
 - ➔ Wi-Fi ցուցիչի  լույսը թարթում է նարնջագույնով:
- 3 Կատարեք «Առաջին անգամ Wi-Fi կապի կարգավորում» բաժնի 3-4 քայլերը:

4 Օդամաքրիչ սարքի օգտագործում

Օդի որակի ցուցիչների նշանակությունը

Օդի որակի ցուցիչն ավտոմատ կերպով միանում է, երբ սարքը միացված է և հաջորդաբար թարթում է բոլոր գույներով: Մոտ 30 վայրկյան հետո մասնիկների սենսորն ընտրում է այն գույնը, որը համապատասխանում է օդում գտնվող մասնիկներից կախված օդի որակին:

Օդի որակի ցուցիչի գույնը կախված է PM2.5 մասնիկների և IAI (ալերգենների) վտանգավորության մակարդակից:

Օդի որակի ցուցիչի գույն	Օդի որակի մակարդակ
Կապույտ	Լավ
Կապտամանուշակագույն	Բավարար
Կարմրամանուշակագույն	Վատ
Կարմիր	Շատ վատ

PM2.5

AeraSense սենսորների տեխնոլոգիան ճիշտ հայտնաբերում և արագ արձագանքում է օդում մասնիկների նույնիսկ ամենաչնչին փոփոխությանը: Այն տեղեկություններ է հաղորդում իրական ժամանակում PM2.5 մասնիկների մակարդակի մասին:

PM2.5 մակարդակ	Օդի որակի ցուցիչի գույն
≤12	Կապույտ
13-35	Կապտամանուշակագույն
36-55	Կարմրամանուշակագույն
>55	Կարմիր

Սենյակի աղտոտիչների մեծը մասը մտնում է PM2.5 մասնիկների կատեգորիայի մեջ, որը վերաբերում է օդում փոխանցվող 2,5 միկրոմետրից փոքր աղտոտող մասնիկներին: Փոքր մասնիկների ներքին աղբյուր են ծխախոտի ծուխը, ճաշերի գոլորշիները, մոմի ծուխը: Որոշ բակտերիաներ և բորբոսի փոքրագույն սպորներ, կենդանիների և փոշու տզերի ակերգիա առաջացնող մասնիկներ նույնպես մտնում են PM2.5 կատեգորիայի մեջ:

IAI

Պրոֆեսիոնալ դասի **AeraSense** սենսորը հայտնաբերում է սենյակի օդի ակերգեցնների մակարդակը և տեղեկություններ է հաղորդում ներսի օդի ակերգեցնների պոտենցիալ ռիսկի մակարդակի մասին 1-ից 12 սանդղակով: 1-ը ցույց է տալիս օդի գերազանց որակ:

IAI մակարդակ	Օդի որակի ցուցիչի գույն
1-3	Կապույտ
4-6	Կապտամանուշակագույն
7-9	Կարմրամանուշակագույն
10-12	Կարմիր

Միացում և անջատում

Նշում.

- Օպտիմալ մաքրման համար փակեք դռներն ու պատուհանները:
- Վարագույրները հեռու պահեք օդի մուտքից կամ օդի ելքից:

1 Օդամաքրիչի խրոցը միացրեք հոսանքի վարդակին:

2 Հպեք **Փ**՝ օդամաքրիչը միացնելու համար:

➡ Օդամաքրիչն ազդանշան է տալիս:

➡ «---» ցուցադրվում է էկրանին տաքացման ժամանակ: Այնուհետև օդամաքրիչը օդի որակը չափելուց հետո ցույց է տալիս PM2.5/IAI մակարդակը:

➡ Օդամաքրիչը գործում է ավտոմատ ռեժիմով՝ էկրանին IAI- ով:



3 Սեղմեք և պահեք **Փ** 3 վայրկյան՝ սարքն անջատելու համար:

Նշում. եթե օդամաքրիչը միացված է մնում էլեկտրասնուցման վարդակին անջատելուց հետո (OFF), օդամաքրիչը միացնելուց (ON) հետո այն նորից կաշխատի նախկին կարգավորումներով:

Ավտոմատ ռեժիմի կարգավորումների փոփոխություն

Դուք կարող եք ընտրել ավտոմատ ռեժիմը, արագություն 1, արագություն 2, տուրբո ռեժիմը կամ քնի ռեժիմը՝ հպելով  կոճակին:



Ավտոմատ ռեժիմ (⚙️): Օդամաքրիչն ավտոմատ կերպով կարգավորում է հովիարի արագությունը՝ շրջապատի օդի որակին համապատասխան:



Ոչ ավտոմատ ռեժիմ (🌀 & 🌀): Ոչ ավտոմատ ռեժիմում օդամաքրիչն աշխատում է 1-ին կամ 2-րդ արագությամբ:



Տուրբո ռեժիմ (🌀): Օդամաքրիչն աշխատում է ամենաբարձր արագությամբ:



Քնի ռեժիմ (🌙): Օդամաքրիչն աշխատում է հանգիստ՝ ցածր արագությամբ: 3 վայրկյանից էկրանի լույսն անջատվում է:


Էկրանի ցուցիչի միացում

Լշում. սարքը կանխադրված կերպով ցուցադրում է PM2.5 մասնիկների մակարդակը:

- Սեղմեք և պահեք  կոճակը 3 վայրկյան՝ ցուցադրման ցուցիչը IAQ /PM2.5-ի միջև փոխելու համար:



Ցուցիչի միացման/անջատման գործառնություն



Լույսի ցուցիչով կառավարման վահանակը կարող է ինքնաբերաբար միանալ, անջատվել կամ մթնել՝ կախված շրջապատի լույսից: Կառավարման վահանակը կանջատվի կամ կմթնի, երբ շրջակա միջավայրը լուսավոր չէ: Բոլոր լույսերը միացնելու համար կարող եք հպել ցանկացած կոճակի: Այնուհետև, եթե այլ գործողություն չկատարվի, բոլոր լույսերը կանջատվեն կամ նորից կխամրեն՝ շրջակա լույսավորությանը համապատասխանելու համար: Դուք կարող եք ձեռքով հպել  կոճակին՝ բոլոր լույսերն ու կառավարման վահանակն անջատելու համար: Հպեք ցանկացած կոճակի՝ բոլոր լույսերը միացնելու համար:

5 Մաքրում և տեխնիկական սպասարկում

Նշում.

- Մաքրելուց առաջ միշտ հոսանքից անջատեք հենակայանը:
- Երբեք մի ընկղմեք սարքը ջրի կամ որևէ այլ հեղուկի մեջ:
- Սարքի որևէ մաս մաքրելու համար երբեք մի օգտագործեք հղկող, ագրեսիվ կամ դյուրավառ մաքրող միջոցներ, օրինակ՝ քլոր կամ սպիրտ:
- Ֆիլտրը մաքրելու համար երբեք մի օգտագործեք հեղուկներ (ներառյալ ջուրը):
- Մի փորձեք օդային մասնիկների սենսորը մաքրել փոշեկուլով:

Մաքրման ժամանակացույց

Հաճախականություն	Մաքրման եղանակ
Անհրաժեշտության դեպքում	Սրբեք սարքի պլաստամասե մասը փափուկ չոր կտորով
	Մաքրեք օդի ելքի կափարիչը
Երկու ամիսը մեկ	Օդային մասնիկների սենսորը մաքրեք չոր բամբակե փայտիկով
☛ ցուցադրվում է էկրանին:	Մաքրեք ֆիլտրի մակերևույթը

Օդամաքրիչի կորպուսի մաքրում

- Պարբերաբար մաքրեք օդամաքրիչը ներսից և դրսից՝ փոշու կուտակումից խուսափելու համար:
- Օդամաքրիչը ներսից և դրսից, ինչպես նաև ելքային հատվածը մաքրեք փափուկ, չոր շորով:

Օդային մասնիկների սենսորի մաքրում

Մաքրեք օդային մասնիկների սենսորը յուրաքանչյուր 2 ամիսը մեկ՝ օդամաքրիչի օպտիմալ աշխատանքի համար:


Նշում.

- Եթե օդամաքրիչն օգտագործվում է փոշոտ միջավայրում, գուցե ավելի հաճախ մաքրման կարիք լինի:
- Եթե սենյակում խոնավության մակարդակը շատ բարձր է, օդային մասնիկների սենսորի վրա կարող է առաջանալ խտացում, և օդի որակի լույսը կարող է ցույց տալ ավելի վատ օդի որակ, չնայած որ այն իրականում լավ է: Եթե դա տեղի ունենա, մաքրեք օդային մասնիկների սենսորը:


2



3




5



- 1 Անջատեք օդամաքրիչը և հանեք այն հոսանքի վարդակից:
- 2 Բացեք օդի որակի սենսորի կափարիչը:
- 3 Մասնիկների սենսորը մաքրեք խոնավ բամբակով:
- 4 Բոլոր մասերը մանրակրկիտ չորացրեք չոր բամբակե փայտիկի միջոցով:
- 5 Փակեք օդի որակի սենսորը:

Ֆիլտրի մակերևույթի մաքրում




Ֆիլտրի նախազգուշացման ցուցիչների նշանակությունը

Ֆիլտրի մաքրման ազդանշանը  ցուցադրվում է էկրանին:


Գործողություն

Մաքրեք ֆիլտրի մակերևույթը փոշեկույով:

- 1 Անջատեք օդամաքրիչը և հանեք այն հոսանքի վարդակից:



- 2 Քաշեք հետևի կափարիչը և հանեք այն սարքից:
- 3 Հանեք ֆիլտրը սարքից:
- 4 Մաքրեք ֆիլտրի մակերևույթը փոշեկուլով:
- 5 Ֆիլտրը նորից հետ դրեք սարքի մեջ:
- 6 Հետևի կափարիչը նորից դրեք տեղը:
- 7 Օդամաքրիչի խրոցը միացրեք հոսանքի վարդակին:
- 8 Սեղմեք **⏻** կոճակը՝ սարքը միացնելու համար:
- 9 Սեղմեք և պահեք **💡** և **😊** կոճակը 3 վայրկյան՝ ֆիլտրի մաքրման ժամանակը վերականգնելու համար:
- 10 Ֆիլտրը մաքրելուց հետո ձեռքերը մանրակրկիտ լվացեք:



Ֆիլտրի փոխարինում

Օդի որակի վերահսկման համակարգի արգելափակման նշանակությունը


Այս օդամաքրիչն ունի ֆիլտրի փոխարինման ցուցիչ, ինչը ցույց է տալիս, որ օդի մաքրման ֆիլտրը գտնվում է օպտիմալ վիճակում, երբ օդամաքրիչը գործում է: Երբ ֆիլտրը պետք է փոխարինվի, ֆիլտրի փոխարինման ազդանշանը **🗑️** վառվում է կարմիր գույնով:

Եթե ֆիլտրը ժամանակին չփոխվի, օդամաքրիչը կդադարի գործել և ինքնաբերաբար կկողպվի՝ սենյակում օդի որակը պահպանելու համար: Փոխեք ֆիլտրը հնարավորինս շուտ:

Ֆիլտրի փոխարինում


Նշում.

- Ֆիլտրը չի կարելի լվանալ կամ նորից օգտագործել:
- Միշտ հանեք օդամաքիչը էլեկտրասնուցման վարդակից՝ ֆիլտրերը փոխարինելուց առաջ:



Ֆիլտրի նախազգուշացման ցուցիչների նշանակությունը	Գործողություն
Ֆիլտրի փոխարինման ազդանշանը  վառվում է	Փոխարինեք NanoProtect ֆիլտրը (FY1700/30)

1 Անջատեք օդամաքիչը և հանեք այն հոսանքի վարդակից:



2 Քաշեք հետևի կափարիչը և հանեք այն սարքից:

3 Հանեք ֆիլտրը սարքից:

4 Հեռացրեք նոր ֆիլտրի ողջ փաթեթավորումը:

5 Տեղադրեք նոր ֆիլտրը սարքի մեջ:


6 Հետևի կափարիչը նորից դրեք տեղը:

7 Օդամաքիչի խրոցը միացրեք հոսանքի վարդակին:

8 Սեղմեք  կոճակը՝ սարքը միացնելու համար:

9 Սեղմեք և պահեք  և  կոճակը 3 վայրկյան՝ ֆիլտրի շահագործման ժամանակի հաշվիչը վերակայելու համար:

10 Ֆիլտրը փոխարինելուց հետո ձեռքերը մանրակրկիտ լվացեք:




Նշում. Հոտ մի քաշեք ֆիլտրից, քանի որ այն կուտակել է օդից աղտոտիչներ:

Ֆիլտրի վերակայում


Դուք կարող եք նաև փոխել ֆիլտրը՝ նույնիսկ մինչև էկրանին կցուցադրվի ֆիլտրը փոխելու ազդանշանը (): Ֆիլտրը փոխելուց հետո անհրաժեշտ է ձեռքով վերակայել ֆիլտրի շահագործման ժամանակի հաշվիչը:

1 3 վայրկյան սեղմած պահեք հոսանքի  կոճակը՝ սարքն անջատելու և խրոցը վարդակից անջատելու համար:

2



3



2 Միացրեք խրոցը վարդակին:

3 Միացնելուց հետո 15 վայրկյանի ընթացքում հպեք և պահեք  և  կոճակները 3 վայրկյան՝ ֆիլտրի շահագործման ժամանակի հաշվիչը վերակայելու համար:

6 Պահեստավորում

1 Անջատեք օդամաքրիչը և հանեք խրոցը վարդակից:

2 Մաքրեք օդամաքրիչը, օդային մասնիկների սենսորը և ֆիլտրի մակերեսը (տես «Մաքրում և սպասարկում» գլուխը):

3 Պահելուց առաջ թողեք, որ բոլոր մասերը մանրակրկիտ չորանան բաց օդի պայմաններում:

4 Փաթեթավորեք ֆիլտրը օդապաշտպան պլաստիկ տոպրակների մեջ:

5 Պահեք օդամաքրիչը, ֆիլտրը զով, չոր տեղում:

6 Միշտ մանրակրկիտ լվացեք ձեռքերը ֆիլտրի հետ աշխատելուց հետո:

7 Անսարքությունների վերացում

Այս գլխում ներկայացված են ամենատարածված խնդիրները, որոնք կարող են հանդիպել սարքի օգտագործման ժամանակ: Եթե չեք կարողանում խնդիրը լուծել ստորև բերված տեղեկատվության օգնությամբ, դիմեք ձեր երկրում գործող Հաճախորդների սպասարկման կենտրոն:

Խնդիր	Հնարավոր լուծում
Սարքը ճիշտ չի աշխատում:	Ֆիլտրի փոխարինման ազդանշանը անընդհատ միացված է, բայց դուք չեք փոխարինել համապատասխան ֆիլտրը: Արդյունքում, սարքն այժմ կողպված է: Այս դեպքում փոխեք ֆիլտրը և երկար հպեք  և  վերակայեք ֆիլտրի շահագործման ժամկետի հաշվիչը:
Օդի ելքային անցքից դուրս եկող օդի հոսքը զգալիորեն թույլ է, քան նախկինում:	Ֆիլտրի մակերևույթը կեղտոտ է: Մաքրեք ֆիլտրի մակերևույթը (տես «Մաքրում և սպասարկում» գլուխը):
Օդի որակը չի բարելավվում, թեև օդամաքիչը երկար ժամանակ աշխատում է:	- Ստուգեք, որպեսզի փաթեթավորման նյութը հանված լինի ֆիլտրից: - Ֆիլտրը չի տեղադրվել սարքում: Համոզվեք, որ ֆիլտրը (FY1700/30) ճիշտ է տեղադրված: - Օդային մասնիկների սենսորը թաց է: Ձեր սենյակում խոնավության մակարդակը բարձր է և առաջացնում է խտացում: Համոզվեք, որ օդի որակի սենսորը մաքուր է և չոր (տես «Մաքրում և սպասարկում» գլուխը): - Սենյակի չափը մեծ է կամ արտաքին օդի որակը վատն է: Օպտիմալ օդամաքման համար օդամաքիչը գործարկելիս փակեք դռներն ու պատուհանները: - Կան ներքին աղտոտման ռեսուրսներ: Օրինակ՝ ծխելը, ճաշ պատրաստելը, խնկարկումը, օծանելիքը կամ ալկոհոլը: - Ֆիլտրը սպառվում է: Ֆիլտրը փոխարինեք նորով:
Օդի որակի լույսի գույնը միշտ մնում է նույնը:	Օդային մասնիկների սենսորը կեղտոտ է: Մաքրեք մասնիկների սենսորը (տես «Մաքրում և սպասարկում» գլուխը):

Խնդիր	Հնարավոր լուծում
Սարքը տարօրինակ հոտ է արձակում:	Սարքն առաջին անգամ օգտագործելիս հնարավոր է պլաստիկի հոտ գա: Դա նորմալ է: Սակայն, եթե սարքը այրման հոտ է արձակում, նույնիսկ եթե ֆիլտրերը հանում եք, դիմեք ձեր Philips-ի դիլերին կամ Philips-ի լիազորված սպասարկման կենտրոն: Սենյակային օդի կլանման պատճառով ֆիլտրը կարող է որոշ ժամանակ օգտագործելուց հետո հոտ արձակել: Խորհուրդ է տրվում կրկին ակտիվացնել ֆիլտրը՝ այն դնելով արևի ուղիղ ճառագայթների տակ՝ կրկնակի օգտագործման համար: Եթե հոտը չի անցնում, փոխարինեք ֆիլտրը:
Սարքը բարձր ձայն է արձակում:	- Նորմալ է, եթե սարքն աշխատում է տուրբո ռեժիմով: - Ավտոմատ ռեժիմում, եթե սարքը չափազանց բարձր ձայն է արձակում, գուցե այն աշխատում է բարձր արագությամբ, քանի որ օդի որակը վատանում է կամ հավելվածում ձեր անհատականացված կարգավորումը հանգեցնում է օդափոխիչի ավելի բարձր արագության: Կարող եք ընտրել Քնի ռեժիմ կամ փոխել կարգավորումները հավելվածում: - Եթե կա ոչ նորմալ ձայն, դիմեք ձեր երկրի Հաճախորդների սպասարկման կենտրոն: - Եթե ինչ-որ բան ընկնում է օդի ելքի մեջ, այն կարող է նաև առաջացնել ոչ նորմալ բարձր ձայն: Անմիջապես անջատեք և գլխիվայր շրջեք սարքը՝ սարքից օտար առարկաները հանելու համար:
Սարքի վրա շարունակում է թարթել ֆիլտրը փոխելու ցուցիչը, բայց այն արդեն փոխվել է:	Հավանաբար, դուք չեք վերակայել ֆիլտրի շահագործման ժամկետի հաշվիչը: Միացրեք սարքը: Այնուհետև հպեք և պահեք Գ և 3 վայրկյան:
Էկրանին ցուցադրվում են «E1» սխալի կոդը:	Շարժիչն անսարքություններ ունի: Դիմեք ձեր երկրում գործող Հաճախորդների սպասարկման կենտրոն:

Խնդիր	Հնարավոր լուծում
Չի հաջողվում կատարել Wi-Fi-ի կարգավորումը:	• Եթե երթուղիչը, որին միացված է ձեր օդամաքրիչը, աջակցում է երկու հաճախություն և ներկայումս միացված չէ 2,4 ԳՀց ցանցին, անցեք նույն երթուղիչի մյուս հաճախությանը (2,4 ԳՀց) և կրկին փորձեք կապակցել օդամաքրիչը: 5 ԳՀց ցանցերը չեն աջակցվում: • Վեր գննարկե՛ք ձեր վավերացմամբ ցանցերը չեն աջակցվում: • Համոզվեք, որ օդամաքրիչը գտնվում է Wi-Fi երթուղիչի ծածկույթի տարածքում: Հնարավոր է՝ հարկավոր է օդամաքրիչը մոտեցնել ձեր Wi-Fi երթուղիչին: • Ստուգե՛ք ցանցի անունը ճիշտ է մուտքագրված: Ուշադիր եղե՛ք ցանցի անվան մեջ առկա մեծատառերին և փոքրատառերին: • Ստուգե՛ք Wi-Fi-ի գաղտնաբառը ճիշտ է մուտքագրված: Ուշադիր եղե՛ք գաղտնաբառի մեջ առկա մեծատառերին և փոքրատառերին: • Կրկին փորձե՛ք կարգավորել՝ հետևելով հետևյալ բաժնի հրահանգներին՝ «Wi-Fi կապի վերակարգավորում»: • Wi-Fi կապը կարող է ընդհատվել էլեկտրամագնիսական կամ այլ խափանումների պատճառով: Սարքը հեռու պահե՛ք այլ էլեկտրական սարքերից, որոնք կարող են խափանումներ առաջացնել: • Ստուգե՛ք շարժական սարքը դրված է ինքնաթիռի ռեժիմում: Wi-Fi ցանցին միանալիս համոզվե՛ք, որ ինքնաթիռի ռեժիմն անջատված է: • Տե՛ս Հավելվածի օգնության բաժինը՝ անսարքությունների վերացման ակտուալ և քայլ առ քայլ խորհուրդների համար:

8 Երաշխիք և աջակցություն

Այս արտադրանքը գնելուց հետո Versuni-ն առաջարկում է երկու տարվա երաշխիք: Երաշխիքը չի գործում, եթե ապրանքի թերությունը առաջացել է սխալ օգտագործման կամ վատ սպասարկման հետևանքով: Մեր երաշխիքը չի ազդում օրենքի շրջանակներում Ձեր սպառողական իրավունքների վրա: Լրացուցիչ տեղեկությունների կամ երաշխիքը գործարկելու համար այցելե՛ք մեր վեբկայք՝ www.philips.com/support:

Պատվիրեք մասեր կամ արժեստուարներ

Եթե ձեզ անհրաժեշտ է փոխել որևէ մաս կամ ձեռք բերել սարքի լրացուցիչ մասեր կապվե՛ք ձեր երկրում գործող Philips-ի գործակալի հետ կամ այցելե՛ք www.philips.com/support կայք:

Եթե սարքի մասերը ձեռք բերելու հետ կապված հնարավորություններ ունեք, դիմե՛ք ձեր



Օդի մաքրիչ

AC1715: 24V ;

KA3601A-2401500EU: Մուտք 100-240V~; 50/60Hz;

Ելք 24V ;

27W

Արտադրող՝ «DAP B.V.», Tussendiepen 4 a, 9206AD, Drachten, Նիդերլանդներ
Ներկրող: Լրացուցիչ տեղեկությունների համար տես հավելվածը.

Սարք II դասի

Կենցաղային կարիքների համար

Պատրաստված է Չինաստանում

Պահպանման, շահագործման կանոններ

Ջերմաստիճան՝ 0°C - 35°C

Հարաբերական խոնավություն՝ 20% - 75%

Մթնոլորտային ճնշում՝ 85 - 109kPa



Philips-ը և Philips Shield Emblem-ը հանդիսանում են Koninklijke Philips N.V.-ի գրանցված ապրանքանշանները և օգտագործվում են լիցենզիայի շրջանակներում: Այս սարքը արտադրվել է Versuni Holding B.V. ընկերության կողմից և վաճառվել ընկերության պատասխանատվության ներքո. Versuni Holding B.V. ընկերությունը հանդիսանում է այս սարքի երաշխավորը:
2023 © Versuni Holding B.V.

AC1715_user manual_v1.0 (17/11/2023)

